



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մայիսի 2018 թվականի N 621

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ «ԵՐԿԻՐ ԾԻՐԱՆԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔ  
ԵՎ ԵՐԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երկիր Ծիրանի» կուսակցության անդամ Մարինա Խաչատրյանի կողմից ներկայացված հանրային հավաքի անցկացման իրազեկման վերաբերյալ դիմումը, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ա.Ղազարյանի 2018 թվականի մայիսի 03-ի թիվ 57/4-1682 գրությունը՝ հանրային հավաքի և երթի անցկացման վերաբերյալ դրական կարծիքով, ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ և 20-22-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

- 1.«Երկիր Ծիրանի» կուսակցության կողմից 2018 թվականի մայիսի 09-ից մայիսի 31-ը ժամը 11:00-ից մինչև 23:00-ն ընկած ժամանակահատվածում, Վանաձոր քաղաքի Արցախ պուրակում հանրային հավաքի և երթի անցկացման վերաբերյալ իրազեկումն ընդունելի գիտություն:
- 2.Իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին համայնքի ղեկավարի որոշման մասին անհապաղ տեղեկացնել կազմակերպիչներին և ոստիկանությանը, ինչպես նաև համապատասխան որոշումը փակցնել համայնքապետարանի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի և տեսանելի տեղում: Որոշումը տեղադրել նաև vanadzor.am համացանցային կայք էջում:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝ Մ.ԱՍԼԱՆՅԱՆ

Ճիշդ է՝  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա.ՕՀԱՆՅԱՆ